ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ

(Լևոն Զեքիյանի ծննդյան 65 և գործունեության 40-ամյակի առթիվ)



Մի շարք ակադեմիաների անդամ, պատվավոր դոկտոր, Վենետիկի համալսարանի հայագիտական ամբիոնի վարիչ, պրոֆ. Լևոն Զեքիյանը գիտության և կրթության ոլորտում անցել է բեղուն և արգասավոր ուղի:

Նա ծնվել է Կ. Պոլսում, 1943 թ. հոկտեմբերի 21-ին: Նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի Բերայի թաղամասի Մխիթարյան վարժարանում, միջնակարգ կրթությունը՝ տե-ղի իտալական վարժարանում և Ս. Ղազար դպրեվանքում: Ուսման մեջ խորանալու նպատակով մեկնել է Հռոմ, ուր Գրիգորյան համալսարանում ստացել է իմաստասիրության և աստվածաբանության (1966 թ.) մագիստրոսի աստիճան: Երկու տարի նույն համալսարանում և Արևելյան ուսումնասիրությունների քահանայապետական ինստիտուտում հետևել է մասնագիտացված դասընթացներին:

1968-ին վերադարձել է Կ. Պոլիս և վեց տարի անցկացրել ծննդավայրում: 1973 թ. Ստամբուլի պետական համալսարանում ստացել է փիլիսոփայական դոկտորի աստիճան՝ որպես ատենախոսություն ներկայացնելով «Օգոստինոսի ճանաչողական տեսության մեջ ներգոյության սկզբունքը և ենթակայի ինքնաճանաչումը»: Մի քանի տարի ծննդավայրի Մխիթարյան և կենտրոնական միջնակարգ վարժարաններում աշխատել է որպես հայերեն լեզվի, տրամաբանության և բարոյագիտության ուսուցիչ:

1874 թ. մնայուն հաստատվել է Վենետիկի Ս. Ղազար վանքում՝ ստանձնելով «Հայ ընտանիք» պարբերականի խմբագրի, «Բազմավեպ» հայագիտական հանդեսի փոխխմբագրի և ապա՝ խմբագրի (1980-1985) պատասխանատու պաշտոնները: Միաժամանակ հայոց լեզու, դասական հունարեն և փիլիսոփայություն է դասավանդել դպրեվանքի և հայագիտական մի շարք առարկաներ՝ Մուրադ-Ռափայելյան վարժարանի ուսանողներին, իսկ 1982-1985 թթ.՝ ստանձնել վերջինիս տնօրենի պաշտոնը: Այստեղ կազմակերպել է հայոց լեզվի և մշակույթի ամառային խտացված դասընթաց: 1976 թվականից նա Վենետիկի Կա ֆոսկարի համալսարանում հայոց լեզվի և գրականության դասախոս է: Այդ հիմքի վրա 1983 թ. ստեղծվում է նույն անունով կամ հայագիտություն անվանվող ամբիոն, որի անփոփոխ վարիչն է Լ. Զեքիյանը:

1976 թ. Լ. Զեքիյանը սկսել է գործակցել հայ արվեստի ճանաչված մասնագետ պրոֆ. Ադրիանո Ալպագո-Նովելլոյի հետ, համատեղ կազմակերպել են Միլանի հայ մշակույթի ուսումնասիրության և վավերագրումի կենտրոնը, որի մնայուն աշխատակիցն է եղել հոբելյարը: 1988 թ. Լ. Զեքիյանը հայ եկեղեցու

պատմություն և աստվածաբանություն է դասավանդում Վատիկանի (Հռոմ) արևելագիտական ինստիտուտում:

Իր հայագիտական ծանրակշիռ վաստակի շնորհիվ Լ. Զեքիյանը առաջիններից մեկը ընտրվեց (1994) Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի արտասահմանյան անդամ:

Լ. Զեքիյանի 40-ամյա գործունեությունն ընթացել է երեք ուղղությամբ՝ գիտություն, մանկավարժություն և հասարակական կյանք: Բոլոր բնագավառներում էլ բեղուն աշխատանք է ծավալել և հասել գնահատելի արդյունքների: Այդ հաջողությունները պայմանավորված են եղել մի շարք հանգամանքներով: Նախ իմաստասիրության և աստվածաբանության մեջ մասնագիտանալը հնարավորություն է ընձեռել պատմաբանասիրական և մշակութային հիմնահարցերին մերձենալ լայն ընդգրկումով: Մեռած լեզուներից հին հունարենին, լատիներենին, իսկ կենդանի լեզուներից իտալերենին, ֆրանսերենին, անգլերենին, թուրքերենին տիրապետելը ճանապարհ է հարթել իր աշխատանքներում օգտագործելու բազմալեզվյան հարուստ աղբյուրներ ու գրականություն: Եվ, վերջապես, այդ ամենը կենդանություն են ստացել ինքնամոռաց աշխատասիրությամբ:

Նրա գրչին են պատկանում 13 մենագրություն և ավելի քան հարյուր վաթսուն հոդված: Գիտական աշխատություններից են՝ «Հայ թատրոնի առաջին քայլերը և հայ վերածնունդի շարժումը» (1975), «Համամիութենական տրամախոսություն մը ԺԲ դարուն» (1978), «Օգոստինյան ներգոյապաշտությունը» (1980, իտալերեն), «Հումանիզմ. ներհողացային բովանդակություններ ու պատմական արմատներ» (1981, թուրքերեն), «Տրամասությունը արժեքի և պատահականության միջև. Մշակութային երևութաբանությունից դեպի արժեաբանական վերահիմնավորում» (1998, իտալերեն), «Հայաստան և հայերը. Հերձատած «Ոստան» և հոգևոր հայրենիք. վերապրումի մարտահրավերը» (2000, իտալերեն), «Ինքնության խճանկար» (2001), «Հայապատում» (2001) և այլն:

Գիտական իր ուսումնասիրություններում պրոֆ. Լ. Զեքիյանը քննության նյութ է դարձրել հայոց պատմության, լեզվի, գրականության, արվեստի այնքան բազմազան հիմնահարցեր, որ դրանց բոլորին անդրադառնալ հնարավոր չէ: Հոդվածի ընձեռած հնարավորությունների սահմաններում կփորձենք ներկայացնել հեղինակի տեսակետները միայն մի քանի առանցքային նշանակության հարցերի մասին:

Վերջին շրջանում համաշխարհայնացման (գլոբալացման) քաղաքականության ակտիվացումը աշխուժացրեց հակառակ երևույթը՝ ինքնության արծարծումը: Բանավոր ու գրավոր ելույթներ, հրապարակումներ են լինում այդ ուղղությամբ: Լ. Զեքիյանն այդ հիմնահարցի հետազոտումը սկսել է տասնամյակներ առաջ՝ 1980-ական թվականների սկզբից: Քաջատեղյակ լինելով տարբեր լեզուներով հրատարակված գրականությանը՝ նա հարցը դիտարկում է համակողմանի: Նախ տալիս է «ինքնություն» հասկացության բնորոշումը, նշում, որ նրա մասն են կազմում բազում տարրեր, սակայն այն առաջին հերթին մտային, հոգեկան ու հոգեբանական իրար հաղորդակցվող մի ամբողջություն է: Ինքնությունը մեկ անգամ ընդմիշտ տրված, անփոփոխ մի իրողություն չէ, այլ դիալեկտիկական բնույթ ունի և ենթակա է հարատև զարգացման:

Հայ ժողովրդի պատմական անցյալի իրողություններով պրոֆ. Լ. Զեքիյանը հիմնավոր մերժում է գրականության մեջ արծարծվող այն տեսակետը թե «ազգ» հասկացությունը ենթադրում է պետականության առկայություն: Տվյալ էթնոսը, եթե պետական միավորում չունի, նշանակում է նա «ազգ» չէ, այլ «ժողովուրդ» է: Նա իրավացիորեն գտնում է, որ հայ ժողովուրդը, պետական կարգավիճակ չունենալով, «ազգ» կբնորոշվի գոնե V դ. սկսած՝ պատմամշակութային իր ստեղծած արժեքներով, դրա գիտակցությամբ և ժողովրդի ճակատագրի հանդեպ հասարակության մտահոգությամբ ու նվիրվածությամբ:

Պատմահայր Մովսես Խորենացու աշխատության մասին գրում է. «Այդ գործը սակայն, մեծ նշանակութիւն ունի նաեւ իբրեւ հայ ժողովրդի ազգային ինքնա-գիտակցութեան կազմաւորման և հիմնաւորման յուշարձան»: Ապա իր միտքը շարունակում է. «Եթէ Մեսրոպ Մաշտոցը կերտիչն է հայ գրաւոր մշակոյթի, Մովսէս Խորենացին առաջին ու մեծ գաղափարախօսն է այդ գրաւոր մշակոյթի ստեղծման ներփակած ազգային ինքնագիտակցութեան»: Եվ իր միտքը եզրափակում է հետևյալ կերպ. «Քերթողահայր ու Պատմահայր: Հավանօրէն՝ աւագ հիմնադիրը յունաբան դպրոցի, ստուգիւ՝ ուղեղը հայ ինքնութեան եւ գիտակցութեան»: Նա ինքնությունը դիտում է ազգային հավաքականության հարթակի վրա, բոլոր հայերի, անկախ քաղաքացիությունից ու դավանանքից, հավասարության սկզբունքով՝ բնավ չանտեսելով Հայ առաքելական եկեղեցու առանձնաշնորհյալ դիրքն ու դերը:

Պրոֆ. Լ. Զեքիյանը առաջիններից մեկն էր, որ նշեց Հայոց մեծ եղեռնի առանձնահատկությունը: Մարդկային վիթխարի կորուստներից բացի, որը հատուկ է եղեռն ապրած բոլոր ժողովուրդներին, 1915 թ. ցեղասպանությունը ևս մեկ այլ կործանարար հատկանիշով էր առանձնանում: Թուրքական իշխանու-թյունները կոտորածները զուգակցեցին ժողովրդին տեղահանելու, հայրենիքից կտրելու, արմատախիլ անելու մշակված ծրագրի հետ, որպեսզի նա զրկվի ծիլ արձակելու, իր հայրենիքում ազգային կյանքը վերականգնելու հնարավորություններից: Նա եղեռնը դիտում է որպես ամեն մի հայի էության մի մասնիկը, այն բևեռացված ձևով կա և մնալու է մեր մտքի և հոգու մեջ: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է գտնում, որ եղեռնը չդառնա մեր «հիվանդությունը», մեր հոգու ախտը: Այդ է համարում նոր սերունդների համար՝ եղեռնի վերափոխության մեծ մարտահրավերը:

Լ. Զեքիյանը սփյուռքում ապրող այն եզակի մտավորականներից է, որը խորապես գիտի աշխարհի տարբեր երկրներում հանգրվան գտած հայ զանգվածների և հայրենիքի կյանքն ու նրանցում տիրող իրավիճակն իր բոլոր դրսևորումներով: Անմիջական ու անկաշկանդ հաճախակի շփումները հայրենիքի ամենատարբեր շերտերի ու տարիքի մտավորականության հետ, նրանց հետ մշտական կապերի մեջ լինելը հնարավոր են դարձրել հայրենաբնակ մտավորականների մակարդակով ճանաչել ու քաջատեղյակ լինել հայրենիքում կատարվող իրադարձություններին, ընդհանուր իրավիճակին: Մշտապես ոչ միայն նախանձախնդիր է եղել, այլև ապրել է սփյուռք-հայրենիք կապերի սերտացման, ազգային միասնության խնդրով: Նա այդ կապերը դիտարկել է գաղափարական հենքով և իր աշխատություններում հաճախ է անդրադարձել դրանց:

Բազմիցս շեշտելով «Մայր հայրենիքի» կենսական դերակատարությունը սփյուռքի գոյատևման հարցում՝ տակավին երեսուն տարի առաջ նա հարց էր բարձրացնում հայրենիքում «համասփյուռքային» մի մարմին ստեղծելու անհրաժեշտության մասին՝ մի կազմակերպող օղակ, որը վեր կանգնած լինի հատվածական, կուսակցական, խմբակցային մոտեցումներից: Հետագայում քանիցս անդրադառնում, շեշտում ու հիմնավորում էր Հայաստանի կառավարության համակարգում պաշտոնական մի օղակ ստեղծելու խնդիրը, որն ավելի լայն չափանիշներով կներդաշնակի այդ կապերը: «Հիմնական հարցադրումներ Հայաստան-Սփյուռք փոխառնչությունների մասին» հոդվածում 1995 թ. գրում է. «Պետք է, կը կարծեմ, լինի՛ Հայ Պետականութեան ծիրին մէջ պաշտօնական մարմին մը՝ որ սփիւռքահայը ճանաչէ իբր հայ եւ զբաղի անով իբր հայ, եւ ուր Հայը՝ իր իսկ հայրենի ու մայրենի, եթէ կուզէք՝ պապենական, հողին վրայ ինքզինքը հուսկ օտարներու, օտարերկրացիներու շարքին դասուած չտեսնէ»:

Թե որքանով էր արդարացված գիտնականի՝ այդ հարցին աննահանջ հետամուտ լինելը, երևում է այն փաստից, որ Հայաստանի կառավարության կազմում 2008 թ. ստեղծվեց հատուկ Սփյուռքի նախարարություն:Սահմանադրորեն

լուծվեց նաև երկքաղաքացիության հարցը, որով սփյուռքահայը հայրենիքում օտարից կտարաբաժանվի լիարժեք քաղաքացի լինելու հանգամանքով:

Հոբելյարի տևական հետաքրքրությունների առարկա են եղել հայոց լեզվի հարցերը, որոնց մասին պարբերաբար հանդես է եկել գրավոր ու բանավոր ելույթներով, դասախոսություններով: Լեզվի տարբեր հարցերի լուսաբանմանը նվիրված գիտաուսումնական հոդվածներից բացի, նա իրեն հեռու չի պահել, ընդհակառակն, ակտիվ մասնակցություն է ունեցել տարակարծություններ առաջացնող բանավիճային սուր քննարկումներին: Սփյուռքի և հայրենիքի մտավորականության լայն շրջաններում բևեռացված տեսակետներ էին ձևավորվել արևմտահայերենի, արևելահայերենի շուրջ: Տեսակետներ, որոնք մերժելու եղանակով առավելություն էին տալիս մեկին կամ մյուսին: Լ. Զեքիյանը «Հայերէնի վերապրումի հարցը», «Արեւմտեան Սփյուռքի մէջ», «Հայերէն լեզուն և հայ ժողովուրդը», «Հայերէն լեզուի հարցեր և Ազգային միութիւն» և այլ հոդվածներ նվիրեց հենց այդ խնդիրներին: Նա լայն դիտարկումով հայոց լեզվի գրական երկու ճյուղերը հավասարապես համարում է համազգային անձեռնմխելի հարստություն, շեշտում արևմտահայերենի պահպանման կարևորությունը և առաջադրում լեզվի երկու ճյուղերի ներքնահաղորդ համակեցության և լեզվական համազգային քաղաքականություն վարելու անհրաժեշտությունը: Այդ հետևությանն է հանգում հայոց լեզվի գրելաձևի, բառամթերքի հարցերը մանրակրկիտ քննարկելու, նոր բառերի ու նորաբանությունների ժամանակ ամենուրեք միաձևության անցնելու և լեզվական երևույթների որոշ բարեփոխումների միջոցով: Այլ խոսքով, համազգային միասնության շահերը նկատի առնելով, նպատակահարմար է տեսնում առօրյա կյանքի առաջընթացի հետ լեզվի մշակված ավանդների հիմքի վրա ստեղծել «ուղղագրութեան միաձեւ համակարգ մը թէ՛ արեւելահայերէնի եւ թէ արեւմտահայերէնի համար»:

Վերջին կես դարում իրականացված՝ հայկական գաղթավայրերի պատմության նպատակաուղղված ուսումնասիրությունների փորձը ցույց է տալիս, որ որևէ գաղութի պատմության հետազոտումը եթե կատարվում է հյուրընկալ երկրի քաղաքացու կողմից, ապա արդյունքները, որպես կանոն, ավելի գոհացուցիչ են լինում: Նախ՝ նրանք լավ են տիրապետում ասպնջական ժողովրդի լեզվին և հնարավորություն են ունենում տեղի արխիվները, այլևայլ աղբյուրներն ու գրականությունը ավելի լիարժեք օգտագործել: Պրոֆ. Լ. Զեքիյանը, օգտագործելով իտալերեն, անգլերեն, ֆրանսերեն և հայերեն հնարավոր բոլոր աղբյուրները, արժեքավոր աշխատանքներ է հեղինակել Իտալիայի հայկական գաղութների և հայ իտալական հարաբերությունների մասին: «Միջին դարու Իտալիոյ հայ գաղութները եւ հայ-իտալ մշակութային կապերը», «Հայերը Վենետիկի մէջ», «Խոջա Սաֆար՝ Շահ Աբբասի դեսպան Վենետիկի մէջ» և այլ հոդվածներում, հայ-իտալական արվեստին նվիրված գիտաժողովների զեկուցումներում համակողմանիորեն մշակել է Իտալիայի հայկական գաղութների ամբողջական պատմությունը: Նա իրավամբ լուսաբանում է երկրի տնտեսական, հասարակական-քաղաքական դրությունը և այդ հիմքի վրա պարզորոշ ուրվագծում հայ համայնքների գոյավիճակը: Փաստական նյութի հիման վրա կատա-րած շարադրանքից հայտնի է դառնում, որ տակավին VI-VII դարերում հայերը բնակվում էին Իտալիայում: Հետագայում՝ XII-XIII դդ., նրանք այնքան էին ստվարացել, որ երկրի 9 քաղաքներում ունեին 10-ից ավելի եկեղեցիներ: Մեկ-երկու դար անց Իտալիայի հայ համայնքները ծաղկուն վիճակում էին: Նրանցից երկարակյաց էին Հռոմի, Վենետիկի և Լիվոռնոյի գաղութները: Հեղինակն անդրադառնում է նաև Ջուղայից գաղթած և Վենետիկում հաստատված Շեհրիմանյանների նշանավոր տոհմի տնտեսական, մասնավորապես հասարակական և մշակութային վիթխարի գործունեությանը:

Պրոֆ. Լ. Զեքիյանի հետաքրքրությունները չեն սահմանափակվել միայն պատմաբանասիրական ոլորտով: Նա ուսումնասիրություններ ունի Պետրոս Դուրյանի, Դանիել Վարուժանի, իտալահայ քննադատ Հովսեփ Աշրաֆյանի մասին, որոնք զուտ գրական կյանքին վերաբերող աշխատանքներ են:

Հայտնի է Մխիթարյան միաբանության վիթխարի ներդրումը հայ մշակույթի ասպարեզում: Պրոֆ. Լ. Զեքիյանը, նշելով միաբանության կողմից կյանքի ամենազանազան խնդիրներին անդրադառնալը, իր «Մխիթարյան միաբանության նպաստը հայ մշակույթին և հայագիտությանը» հոդվածում նրանց գործունեության մեջ զատորոշում է մի շարք ուղղություններ: Դրանցից առաջինը հայ եկեղեցու ավանդությունների հետ առնչված Աստվածաբանական-հայախոսածիսական հետազոտություններն են: Պատմամեկնողական բնույթի այս ուղղության աշխատությունների գլխավոր նպատակն էր ապացուցել հայ եկեղեցու ուղղափառությունն իր տարբեր դրսևորումներով:

Երկրորդ. պատմալեզվական ուսումնասիրություններով Մխիթարյանները նպատակ ունեին նախադրյալներ ստեղծելու հայ ժողովրդի ազգային նոր ինքնագիտակցության համար: Չամչյանի, Ալիշանի, Գարագաշյանի գործերը խոշոր քայլեր էին հենց այդ ուղղությամբ: Նրանց լեզվական ջանքերն ուղղված էին նախ լատինական դպրոցի աղճատումներից գրաբարը մաքրելուն և նրա նախկին վայելուչ տեսքը վերականգնելուն: Լեզվական բնագավառի նրանց մյուս հոգսը ժողովրդական լեզուն զարգացնելն էր: Այդ մաքառումն սկսվեց հենց միաբանության հիմնադիր Մխիթարի աշխարհաբար լեզվի քերականությունից և շարունակվեց նրա հաջորդների (Ինճիճյան, Այտընյան և ուրիշներ) կողմից:

Մխիթարյանների գործունեության երրորդ գլխավոր ուղղությունը համարում է Արևմտյան Եվրոպայի մշակույթին մերձենալը, նրա հետ խոր ու ծավալուն շփումների հաստատումը, որը նրանցից առաջ այդ չափանիշերով գոյություն չուներ:

Լ. Զեքիյանի գիտական գործունեության այս համառոտ ուրվագիծն էլ, կար-ծում եմ, բավարար է պատկերացում կազմելու նրա գիտական հետաքրքրությունների և մոտեցումների մասին: Հատկանշական է, որ նրա գիտական վաստակը բարձր են գնահատել նաև օտարազգի հայագետները: Հոլանդացի ճանաչված հայագետ-լեզվաբան Եոս Վեյտենբերգը գրում է. «Իմ շնորհավորությունները Լևոն Զեքիյանին: Նա մեծ գիտնական է»: Երուսաղեմի եբրայական համալսարանի համեմատական կրոնագիտության և հայագիտության պրոֆեսոր Մայքլ Սթոունը Լ. Զեքիյանի մասին գրում է. «Նրա տեղը առաջին շարքերում է ապրող հայագետների մեջ»:

Նույնքան, թերևս առավել բեղուն ու արգասավոր է եղել պրոֆ. Լ. Զեքիյանի մանկավարժական և հասարակական գործունեությունը:

Մանկավարժական աշխատանքներ սկսել է, ինչպես նկատեցինք, վաղ երիտասարդական հասակում Կ. Պոլսի վարժարաններում, ապա՝ Մխիթարյան միաբանության դպրեվանքում, Մուրադ-Ռափայելյան վարժարանում, իսկ 1978 թ.՝ Վենետիկի պետական համալսարանում, որը շարունակվում է ցարդ: Մի քանի տարի անց նա իր դասախոսությունների հիմքի վրա ստեղծեց հայագիտական ամբիոն, որտեղ մասնագիտացել են հայ և օտարազգի շատ ներկայացուցիչներ: Իր սաներին հաճախ մի քանի ամսով գործուղել է Երևան, մայր բուհում՝ համալսարանում և այլ հաստատություններում հայերենը կատարելագործելու և մասնագիտության մեջ խորանալու նպատակով:

1986-ին Վենետիկի համալսարանում կազմակերպում է հայոց լեզվի և հայ դպրության ամառային խտացյալ մեկամսյա դասընթացներ: Հաջորդ տարում իր կուսակիցների հետ(Գաբրիելա Ուլոհոջյան, Ֆրանքա Օլիվեթի Մանուկյան, Հայկանուշ Մժիկյան) հիմնում է Պո-Արաքս մշակութային ընկերակցությունը: Կազմակերպության նպատակը հայոց լեզվի

պահպանումն ու զարգացումը, հատկապես Վենետիկի համալսարանի ամառային խտացյալ դասընթացներին սատար կանգնելն էր: Ամեն տարի օգոստոս ամսին աշխարհասփյուռ տարբեր գաղութներից Վենետիկ են ժամանում ուսուցիչներ, ամենատարբեր մասնագիտությունների տեր անձնավորություններ, այդ թվում նաև օտարազգի, հայերեն սովորելու, կամ հայերենի իմացությունը բարելավելու նպատակով: Ուսուցումը կազմակերպվում է տարբերակված երեք խմբով՝ ըստ լեզվի իմացության աստիճանի: Շատ թույլերի կամ լեզվին չտիրապետողների, կամ թույլ տիրապետողների և լեզվի բավականաչափ պաշար ունեցողների համար: Տարբեր երկրներից ժամանող հայերը շփվում, հարաբերվում են իրար հետ, փոխադարձ ծանոթանում տարբեր համայնքների հայության կյանքին: Մշտապես բանիմաց մասնագետ է հրավիրվում Հայաստանից, որը ունկնդիրներին ծանոթացնում է հայրենիքի կրթամշակութային և այլ բնագավառների իրավիճակին: Ունկնդիրները ոչ միայն ընդլայնում են լեզվական իրենց իմացությունները, այլև ծանոթանալով հայոց պատմությանն ու գրականությանը՝ հայեցի դաստիարակություն են ստանում և այդ ոգին տեղափոխում իրենց համայնքները: Օտարազգի հայագետների մեծագույն մասը (Վ. Կալցոլարի, Ջ. Տրայինա, Հ. Գոլց և շատ ուրիշներ) հայերենին տիրապետել են՝ մասնակցելով այդ դասընթացներին: Դժվար է գերագնահատել շուտով քառորդ դարը թևակոխող, անընդմեջ միայն նվիրյալ մեկ անձի՝ Լևոն Զեքիյանի ջանքերով կազմակերպվող խտացյալ դասընթացների նշանակությունը:

«Եթէ այսօր հայագէտ եմ,- գրում է Լ. Զեքիյանի մասին Ժնևի համալսարա-նի հայագիտության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր Վալենտինա Կալցոլարին,- մեծ դեր մը ունեցաք Դուք, Ձեր անձնական ուսուցման շնորհիւ եւ ընդհանուր առմամբ Վենետիկ Ձեր կազմակերպած դասընթացներուն շնորհիւ, ուր հասկցայ որ ես, ոչ հայ, կ'ուզէի շարունակել իմ կեանքս միացնել հայ աշխարհի հետ»: Պատահական չէ, որ Վենետիկի ամառային հայագիտական դասընթացները համազգային հետաքրքրության և ուշադրության են արժանանում:

Լ. Զեքիյանը հարյուրավոր դասախոսություններ է կարդացել հայոց պատ-մության, հայ մշակույթի, բանասիրության հարցերի մասին Եվրոպայի, Հյուսիսային և Հարավային Ամերիկայի, Մերձավոր Արևելքի համալսարաններում ու ամենատարբեր լսարաններում՝ ամենուրեք հայ մշակույթին ու հայրենիքին հավատարիմ ծառայելու գաղափարը քարոզելով: Գրեթե առանց բացառության զեկուցումներով հանդես է եկել աշխարհի տարբեր երկրներում հրավիրված՝ հայագիտական հարցերին նվիրված բոլոր գիտաժողովներում: Նա հայ մշակույթի լավագույն քարոզիչն ու տարածողն է աշխարհի տարբեր երկրներում: Ֆրանսիայի Ռուանի համալսարանի պրոֆեսոր, հայագետ Ջուստո Տրայինան գրում է. «Բոլոր հայագետները երախտագիտության պարտք ունեն Լևոն Զեքիյանի նկատմամբ: Պետք է ողջունել բարձրաձայն և ուժգին նրա գիտական գործը, ինչպես նաև նրա ջանքերը Իտալիայում և աշխարհում հայ մշակույթի տարածման համար»: Բոլոնիայի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ Աննա Շիրինյանը դիմում է պրոֆեսորին հետևյալ խոսքերով. «Ձեր մշակութային նախաձեռնությունները, Ձեր ուսումնասիրությունները, Ձեր վերլուծումները միշտ լուսավորել են մեր բոլորի ճանապարհները, ովքեր այստեղ՝ Իտալիայում, փափագել են խորամուխ լինել հայագիտության բազմակի բավիղներին»:

Իր բարեկիրթ ու մատչելի բնավորության շնորհիվ նրա հետ շփվում են սփյուռքի և հայենիքի հասարակությունների ամենատարբեր շրջանների ու տարիքի՝ դպրոցականից սկսած մինչև խոր ծերության հասակում գտնվողները: Նրանց բոլորի հոգսերը ձգտում է թեթևացնել, ամոքել և ամենուր ուղղորդել դեպի ազգային մշակույթը: Հայագետներ Վարդենի Շեյթանյանը և Բեռնար Հոստը գրում են. «Մեր՝ Վենետիկ կատարած առաջին այցերից մեկի ընթացքին

դու մեր հանդեպ այնպիսի հոգատարություն ցույց տվեցիր, մեզ այնպիսի խանդավառությամբ ընդունեցիր՝ մեզ հաղորդելու համար քո գիտությունը, որ կարող էին միայն մեծ գիտնականի և խոր հումանիստի որակը լինել»:

Ռուբեն Զարյանը և Լևոն Հախվերդյանը Լ. Զեքիյանի գործունեության 25-ամյակի առիթով նշում են, որ նա իր շրջապատին ու լսարանին հմայում է «Հայրենասիրական պայծառ նկարագրով, հոգևորական մարդուն վայել պարկեշտությամբ, այլև հոգու և կերպարի գեղեցկությամբ, հպարտ պահվածքով ու մեղմանուշ խոսվածքով, իր անձնական անդիմադրելի գրավչությամբ»: Այսօր Լ. Զեքիյանի գիտակրթական, հասարակական գործունեության 40-ամյակին կարող ենք հավաստել, որ ակադեմիկոսների բնութագրումը պահպանվել, ավելի է ծավալուն դարձել ու բյուրեղացել:

Մտավոր ոլորտում գործող մարդկանց շարքում շատ սակավ հանդիպող աստվածատուր շնորհքի տեր է պրոֆ. Լ. Զեքիյանը: Նրա գիտակցական կյան-քում իմաստասիրական, հայագիտական խոր և ընդգրկուն տեսական գիտելիքները և այդ ուղղությամբ գործնական նախաձեռնություններն ու դրանց իրականացումը մշտապես միավորվում, միաձուլվում են շատ ներդաշնակ: Նա ժառանգել ու հենվում է մեր նախնիներից ավանդված գիտակրթական ու հոգևոր հարստության վրա, որը փոխանցվել է մասնավորապես Միաբանության հիմնադիր Մխիթար Սեբաստացուց: Հայ ժողովրդի՝ դարերի խորքից եկող պատմամշակութային բյուրեղացած ավանդույթները նրա համար ոչ թե սիրո, այլ պաշտամունքի առարկա են:

Սիրված ու հարգված, տակավին երիտասարդական ավյունով աշխատող, հայագիտության ազնիվ ու նվիրյալ մշակին՝ Լևոն Զեքիյանին մաղթում ենք քաջառողջություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ:

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ Վ. Բ.
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս